AZG NEW 3.QXD 1/30/2009 9:24 PM Page 1





# Ինչ կտան GSP+ արտոնությունները Հայաստանի արտահանողներին




Հայաստանին Եվրոմիության երկրների հետ առեւտրի GSP+ արտոնությունների տրամադրման մասին երեկ մանրամասներ ներկայացրին էկոնոմիկայի փոխնախարար **Մուշեղ Թումասյանն** ու Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության գործադիր տնօրեն **Գագիկ Մակարյանը**: Մուշեղ Թումասյանը նշեց, որ Հայաստանի ապրանքաշրջանառության 50 տոկոսը եւ արտահանման 30 տոկոսը կատարվում են Եվրոմիության երկրների հետ, եւ այս առումով Հայաստանին տրված արտոնությունը շատ կարեւոր է: Եթե մինչեւ 2008-ի դեկտեմբերը GSP համակարգով Հայաստանը հնարավորություն ուներ արտոնյալ ռեժիմով ԵՄ երկրներ արտահանելու մոտ 2 հազար ապրանքներ, ապա GSP+ համակարգով՝ արդեն 6400 ապրանքներ:

Հայաստանից առանց մաքսատուրքի կամ ցածր մաքսատուրքով ԵՄ արտահանման հնարավորություն են ստացել հայկական ծխախոտը, բնական հյութերը, մրգերը, բանջարեղենը, ձկնամթերքը, մեղրը եւ այլն: Միաժամանակ, բանակցություններ են ընթանում ԵՄ հետ ամբողջական ազատ առեւտրի պայմանագրի կնքման շուրջը: Այս տարվա փետրվարին այդ նպատակով Հայաստան կայցելի ԵՄ փաստահավաք առաքելությունը:

Մուշեղ Թումասյանը նաեւ հայտնեց, որ գործարարները վերոնշյալ արտոնյալ ռեժիմից օգտվելու համար պետք է ունենան իրենց ապրանքի ծագման երկրների սերտիֆիկատը, որը տալիս է առեւտրաարդյունաբերական պալատը:

Գագիկ Մակարյանը նույնպես Հայաստանին GSP+ արտոնություններ տրամադրելը լուրջ խթան համարեց արտահանման համար: Օրինակ՝ ծխախոտի համար կկիրառվեն 55 տոկոս, մրգերի, բանջարեղենի համար՝ 20 տոկոս մաքսատուրքեր, մեղր արտադրողները, որոնք դժվարություններ ունեին արտահանելու հետ կապված, կկարողանան օգտվել դրանից: Գագիկ Մակարյանը նշեց, որ այս համակարգից օգտվելը հնարավոր դարձավ աշխատանքի կազմակերպման առումով Հայաստանի կողմից մի շարք միջազգային կոնվենցիաներին միանալու շնորհիվ: Եթե այդ կոնվենցիաները չպահպանենք, ապա այդ հնարավորությունից կզրկվենք: Գործարարներին միավորող միության ներկայացուցիչը նշեց նաեւ, որ գործարարներից շատերը դեռ տեղյակ չեն այս հնարավորության մասին, որն, ի դեպ, տրված է 3 տարի ժամկետով: Մինչդեռ դա թույլ կտա ոչ միայն մեր արտահանման ծավալները մեծացնել, այլեւ մեր ապրանքները ճանաչման արժանացնել արտաքին շուկայում: Այսօր հայկական ապրանքները լավ ճանաչված չեն աշխարհում:

Էկոնոմիկայի փոխնախարարը նշեց, որ 2007-ին GSP արտոնություններից օգտվելու շնորհիվ Հայաստանի արտահանողները խնայել են 120 մլն եվրո: «**Ազգի**» այն հարցին, թե այս համակարգը կօգնի՞ մեր հանքարդյունաբերությանն ու ադամանդագործությանը, Մուշեղ Թումասյանը դրական պատասխանեց, ասելով, որ դա որոշակիորեն կնվազեցնի դեպի Եվրոպա արտահանվող այդ ճյուղերի արտադրանքի ծախսը:

Խոսելով տեղական արտադրողների խնդիրների մասին, Գագիկ Մակարյանը մատնանշեց ընկերությունների կառավարման, նոր սարքավորումներով զինելու, կրթական համակարգի հետ համագործակցելու անհրաժեշտությունը: Իսկ այն հարցին, թե ինչպե՞ս է գնահատում ներմուծողների նկատմամբ ակցիզային հարկի ավելացման օրենսդրական փոփոխությունները, Գագիկ Մակարյանը նշեց, որ Առեւտրի համաշխարհային կազմակերպությունը հնարավորություն տալիս է որոշակի հովանավորչություն իրականացնելու տեղական արտադրողների նկատմամբ:

Խոսելով հայկական դրամի արժեւորման մասին, Գագիկ Մակարյանը նշեց, որ այն խոչընդոտում է արտահանմանը եւ նպաստում ներմուծման ավելացմանը: Սակայն նա նաեւ նշեց, որ փորձելու են տեղական արտադրողներին խթանելու այլ տարբերակներ առաջարկել: Օրինակ՝ ազատել տեխնոլոգիական վերազինման նպատակով գանձվող վճարից, նաեւ կառավարության հետ համատեղ ուսումնարաններում մրցունակ աշխատուժ պատրաստել: Մուշեղ Թումասյանն էլ նշեց, որ միայն դրամի փոխարժեքով չի պայմանավորված հայկական ապրանքների մրցունակությունը արտաքին շուկաներում: Դա նախ եւ առաջ պայմանավորված է արտադրության կազմակերպմամբ եւ նոր սարքավորումների օգտագործմամբ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



# «Հրդեհները մարելու աշխատանքները դժվարանում են պատռված փողրակների պատճառով»

**Մայրաքաղաքի հրշեջ ծառայությունը տեխնիկայի քանակական խնդիր չունի, սակայն նույն այդ տեխնիկայի մաշվածության հարցն արդեն տարիներ շարունակ ազդում է ոչ միայն աշխատանքի արագության, այլեւ որակի վրա: «Ոչ միայն մեքենաները, այլեւ հրշեջ գույքը տարիներ շարունակ անմխիթար վիճակում են: Հրդեհները մարելու աշխատանքները դժվարանում են պատռված փողրակների պատճառով: Հանրապետության ստորաբաժանումներն ապահովված են նվազագույն քանակի անհրաժեշտ փողրակներով: Ապահովման աշխատանքները շարունակական են, քանի որ փողրակները մշտապես փոփոխման կարիք ունեն», նշում է Հայաստանի փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետի տեղակալ Պավել Գյոզալյանը:**

**Հանրապետության ողջ մասշտաբով գործող հրշեջ տեխնիկան դեռեւս 1980-ական թվականների արտադրության է: Դրանց մեծ մասը վաղուց սպառել է օգտագործման ժամկետը, սակայն վերանորոգվելուց հետո շարունակվում է շահագործվել: «2007 թվականին մեզ հատկացված գումարներով գնեցինք ինը նոր «Կամազ» մակնիշի ութ տոննա ջրատարողությամբ մեքենաներ, որոնք նախատեսված են խոշոր հրդեհներ մարելու համար: Մեքենաներից մեկը տրվել է Գյումրիին, մյուսը՝ Վանաձորին: Այս տարի ձեռք կբերենք եւս մեկ մեքենա, որը, ամենայն հավանականությամբ, նույնպես կլինի մեծ ջրատարողությամբ», ասաց Պավել Գյոզալյանը:**

**Երեք տարի առաջ հրշեջ ծառայությունը Ֆրանսիայից ստացել է տարբեր նշանակության ինը հրշեջ մեքենա, որոնք, սակայն, արդեն 20-30 տարի շահագործման մեջ են եղել: «Դրանցից մեկն արդեն խափանվել է, մյուսները վերանորոգումից հետո շարունակում ենք շահագործել», նկատում է Պավել Գյոզալյանը:**



**Ներկայումս Երեւանում գործում են 13 հրշեջ-փրկարարական եւ մեկ հատուկ փրկարարական ջոկատներ: Երեւանի կայազորի հրշեջ տեխնիկայի ամբողջական թարմացումը, սակայն, նախատեսվում է իրականացնել 2010 թվականին: Պավել Գյոզալյանը նշում է, որ իրենք մասնակցել են Ճապոնիայի կառավարության դրամաշնորհային ծրագրին եւ հաղթել: Ճապոնիայի կառավարության միջոցով ձեռք կբերվի 28 միավոր տեխնիկա: «Ծրագրում ենք ձեռք բերել 3500-ից մինչեւ 10 000 լիտր ջրատարողությամբ մեքենաներ, երկու մեքենա՝ նախատեսված նեղ փողոցների ու խցանումների համար, ինչպես նաեւ երկու ավտոսանդուղք», ասաց նա:**

**Տեխնիկայի թարմացմանը զուգահեռ, այստեղ մտածում են նաեւ հրշեջների վերապատրաստման մասին: «Հրշեջները պետք է լինեն նաեւ փրկարարներ, մասնակցեն թե՛ հրդեհամարման, թե՛ փրկարարական աշխատանքներին: Ծառայության զարգացման համար այս ուղղությունն ենք որդեգրել», նշում է Պավել Գյոզալյանը:**

**Ձմռան ամիսներին հրշեջ ծառայությունն օրական ստանում է չորսից վեց կանչ, ամռան ամիսներին դրանց թիվը կրկնակի է:**

ՌՈՒԶԱՆ ԲԱԳԱԼՅԱՆ

# Դատավարությո՞ւն, թե բազմասերիանոց էժանագին շոու

Երեկ Շենգավիթի ընդհանուր իրավասության դատարանում կրկին նույն սցենարով ընթացավ «7-ի գործով» դատավարությունը: Էլի նույն մարդիկ էին հավաքվել դատարանի բակում ու կրկին գոռում էին արդեն վաղուց հնչեցրած կոչերը՝ «Ազատություն քաղբանտարկյալներին», «Սերժիկ, հեռացիր», «Լեւոն՝ նախագահ», «Մյուսը ես եմ լինելու»: Թեպետ ձյուն էր գալիս, սակայն ընդդիմադիր գործիչները չվհատվեցին: Բացեցին նախօրոք բաժանված անձրեւանոցները՝ «Լեւոն՝ նախագահ» եւ «Ազատություն քաղբանտարկյալներին» վերտառությամբ ու սպասեցին դատավարության մեկնարկին:

Բանտարկյալները դահլիճ մտան՝ ողջունելով ներկաներին: Ուղիղ ժամը 12-ին «Դատարանն է գալիս, ոտքի՛» արտահայտության ժամանակ դահլիճ մտավ նախագահող դատավոր Մնացական Մարտիրոսյանը: Կրկին ամբաստանյալները ոտքի չկանգնեցին: Մնացական Մարտիրոսյանը ամբաստանյալների անհարգալից վերաբերմունքի պատճառով սանկցիա կիրառեց՝ բանտարկյալներին հեռացնելով դատարանի դահլիճից: Դատը դեռ չսկսված՝ հետաձգվեց: Որոշման տեքստը, որ վերջին դատական նիստերին գրեթե նույնությամբ ընթերցում է Մարտիրոսյանը, ավարտվում է հետեւյալ մտքով. «Հետաձգումների այս ժամկետը չի մտնում պատժաժամկետի մեջ եւ դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ»:

Դատավարությունից հետո Հակոբ Հակոբյանի պաշտպան **Մելանյա Առուստամյանը** նշեց, որ հիմքեր է տեսնում ոչ միայն Սահմանադրական դատարան, այլեւ մարդու իրավունքների Եվրոպական դատարան դիմելու համար:

Ի դեպ այս անգամ դատավարությանը չէր մասնակցում ամբաստանյալ Հակոբ Հակոբյանը: Հիշեցնենք, որ նա առողջական խնդիրներ ունի եւ տեղափոխվել է հիվանդանոց: Նրա պաշտպանից տեղեկացանք, որ վերջինս դատավարության սահմանված ժամին բժշկական զննման է մասնակցում, եւ հավանաբար չի կարողանա ներկա գտնվել նաեւ հաջորդ դատավարությանը: Ինչ վերաբերում է դատավարության հետաձգմանը՝ Մելանյա Առուստամյանը փաստեց, որ այն քողարկված դատավճիռ է: Սասուն Միքայելյանի փաստաբան **Հովիկ Արսենյանն** էլ տեղեկացրեց, որ քաղբանտարկյալի առողջական վիճակը լավ չէ: Արսենյանը միջնորդություն է ներկայացրել քրեակատարողական վարչություն, որտեղ առաջարկում է տեղափոխել Միքայելյանին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ, որտեղ բժշկական հսկողության պայմաններն ավելի լավն




են: «Ներկա պահին Սասուն Միքայելյանի առողջությանն ու կյանքին վտանգ է սպառնում: Նրա վիճակը վատանում է հատկապես գիշերը, եւ հաճախ շտապօգնություն են կանչում: Ներկայացրել եմ Միքայելյանի գլխի նկարահանումները, եւ այս պայմաններում շուրջ մեկ տարի առանց վերահսկողության պահելը հանցագործություն է», հայտարարեց Արսենյանը: Վերջինիս քրեակատարողական վարչությունից պատասխանել են, որ միջնորդությունն ուսումնասիրվել է, սակայն անհրաժեշտ է դատարանի թույլտվությունը Միքայելյանին տեղափոխելու համար:

Դատարանի բակում հավաքված ժողովրդի պահվածքն այս անգամ համեմատաբար զուսպ էր: Թեպետ էլի երգեցին հայրենասիրական երգեր, բանաստեղծություններ, սուլեցին գունավոր սուլիչներով, սակայն հայհոյանքներ նրանց շուրթերից չլսվեցին: Ավելի ուշ պարզվեց, որ ՀԱԿ-ը հաղորդագրություն է տարածել՝ դատավարության ընթացքում չհայհոյել ու ընդհանրապես որեւէ շփում չունենալ ոստիկանության աշխատակիցների հետ: Ավելին, ընդդիմության ակտիվիստները հենց տեղում նույն կոչով թռուցիկներ բաժանեցին հավաքվածներին: Հնչեցին սուլոցներ ու ծափողջույններ նաեւ այն ժամանակ, երբ դատապարտյալներին հատուկ մեքենաներով տարան կալանավայր:

Երբ դատավարությունը վերջացավ՝ ամբաստանյալների կանայք ու երեխաները նստեցին իրենց արտասահմանյան մեքենաներն ու գնացին: Որոշ ժամանակ ժողովրդի հետ անցկացնելուց հետո անձնական մեքենաներով գնացին նաեւ ՀՀՇ ներկայացուցիչներն ու ընդդիմության կարկառուն դեմքերը: Նրանք գնացին, բայց ժողովուրդը մնաց դատարանի բակում՝ շարունակելով գոռալ ու սուլել..... Դատավարությունը, որ ստացել է «Զավեշտ» մականունը՝ կամաց-կամաց վերածվում է էժանագին շոուի: Այն տպավորությունն է ստեղծվում, որ այսպիսի սցենարը կշարունակվի մինչեւ ապրիլ ամիս՝ ԵԽԽՎ գարնանային նստաշրջան, երբ կրկին կքննարկվի Հայաստանին ձայնից զրկելու հարցը: Իսկ մինչ այդ, Հայաստանում առաջնորդվում են Ֆրեդի Մերկուրիի Show must go on երգի նշանաբանով: Հաջորդ շոուն՝ փետրվարի 12-ին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 4.QXD 1/30/2009 9:25 PM Page 1



# Բաց նամակ-դիմում

***Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին,***
***(կրկնօրինակները՝***
***ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին,***
***Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանին,***
***Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանին),***

***ԱՄՆ-ի «Սփյուռք-Diaspora» հասարակական-մշակութային կազմակերպության կողմից***

Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ

Նախ ցանկանում ենք ողջունել եւ շնորհակալություն հայտնել Ձեզ՝ համա-հայկական մշակութային նոր քաղաքականություն որդեգրելու եւ սփյուռքի նախարարություն հիմնելու առիթով:

Մ. Նահանգներ այցի ժամանակ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մեզ վրա գիտակ, իմացական եւ աշխատանքային մեծ կենսափորձ ունեցող անձի տպավորություն թողեց: Սակայն հեռուստատեսային իր ելույթներից մեկում հարգարժան Հրանուշ Հակոբյանն արտահայտեց այն միտքը, թե Հայաստանի սփյուռքի նախարարությունն իր գործունեության ոլորտում պետք է ներառի նաեւ Մ. Նահանգների հայագիտական ամբիոնները: Մի՞թե հարգարժան նախարարը տեղյակ չէ, որ ԱՄՆ-ում հայագիտական ամբիոնների մի շարք ներկայացուցիչներ հիմնականում լծված են սփյուռքահայ ուսանողության ազգային ինքնությունը կազմալուծելու գործին: Մենք հարց ունենք. այդ ո՞ր ամբիոնները կամ ո՞ր դասախոսներին է նկատի առնվում: Գուցե նկատի է առնված UCLA համալսարանի Նարեկացու անվան հայագիտական ամբիո՞նը, որի ղեկավարն է Փիթեր Քաուին: Նրա կազմած դասագիրքը մեր հայ ուսանողներին ուսուցանում է, որ ազգերը երեւակայական հավաքականություններ են, որ ազգային գաղափարախոսությունը մտացածին կատեգորիա է (դասագիրք՝ Armenian C-153), որ Խորենացին եւ Եղիշեն 7-8 դարերում հնարված անձեր են, եւ նրանց երկերը՝ «մերձպատմական շարադրանքներ» (S. Peter Cowe, «Elises Armenian War» էջ 345): Փիթեր Քաուին բացառություն չէ: Օրինակ, ըստ Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Ռոլանդ Գրիգոր Սյունու, ադրբեջանցիները կովկասյան աղվանների ժառանգներն են եւ Արցախի տարածքը պատմականորեն պատկանում է ադրբեջանցիներին (Ronald Grigor Suny, Looking Towards Ararat: Armenia in Modern History, 1993, էջ 193): Այս կեղծարար պրոֆեսորները հետապնդում են քաղաքական պատվեր, իսկ սփյուռքահայ ուսանողը պարտադրաբար սերտում է նմանօրինակ զեղծարարությունները:

Արդյոք կա՞ն այնպիսիները, որոնց մենք չենք ճանաչում: Մենք ճանաչում ենք բոլորին՝ սկսած Ռիչարդ Հովհաննիսյանից մինչեւ Ռոբերտ Թոմսոն եւ Սիմոն Փայասլյան: 1997 թվականից ԱՄՆ-ում որպես բուհական դասագիրք շրջանառության մեջ է դրված The Armenian People from Ancient to Modern Times վերնագրով երկհատորյակը, որը ԱՄՆ-ի կեղծ հայագիտական դպրոցի ներկայացուցիչների կոլեկտիվ արտադրանքն է: Արդյոք Հայաստանի պաշտոնյաները ծանոթ չեն Երեւանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի որոշման հետ (2001 թվականի դեկտեմբերի 19-ի որոշում), որտեղ Հայաստանի գիտնականները քննադատելով կեղծ հայագիտական դպրոցի ներկայացուցիչների հակագիտական զեղծարարությունները՝ հատուկ ընդգծեցին այս քաղաքական պատվեր կատարողների գործունեության վտանգավորությունը (տես՝ **«Ազգ»,** 08.01.2002): Հակագիտական, սխալներով ու խեղաթյուրումներով լի այս դասագիրքը դաստիարակում է ամերիկահայ ուսանողությանը՝ մի մեծ ու նոր վիհ բացելով հայաստանցիների ու սփյուռքահայերի միջեւ: Եվ նորամեթոդ այս քայքայիչ գործունեության ողջ պատասխանատվությունը պետք է հավասարապես բաժանեն ե՛ւ այս երկհատորյակի նշված հեղինակները, ե՛ւ Հայաստանի ազգային ակադեմիայի ա՛յն ներկայացուցիչները, որոնք դրամական գրանտների ստացումով եւ կրավորական դիրքորոշում որդեգրելով՝ ծառայում են անդրօվկիանոսյան նոր տերերին եւ միջնորդում են, որ օտարերկրյա այս կեղծարարներին շնորհվեն շքանշաններ ու Հայաստանի Հանրապետության պատվավոր քաղաքացիություն:

Մեծարգո նախագահ, երբ հարգարժան Հրանուշ Հակոբյանը Հայաստանի Հանրապետության անունից պատմության մեջ առաջին անգամ, այդքան երկար սպասված եւ բաղձալի հայադարձության կոչ է անում, ապա մենք իսկապես ցանկանում ենք հավատալ, որ առաջին հերթին Հայաստանի Հանրապետությունը կանգնած է նաեւ սփյուռքահայ ուսանողի կողքին:

Մեր կազմակերպությունը սփյուռքի նախարարությանը առաջարկում է՝ նախաձեռնել եւ ստեղծել համահայկական պատմամշակութային մեկ ընդհանուր ինֆորմացիոն դաշտ: Համոզված ենք, որ ե՛ւ Հայաստանի, ե՛ւ սփյուռքի հայ ուսանողությունը պետք է ունենա նո՛յն բուհական դասագիրքը եւ իր պատմության մասին տեղեկանա միա՛յն Հայաստանի ազգային ակադեմիայի կողմից հաստատված դասագրքով, քանզի համաշխարհային հայագիտության կենտրոնը հայրենի՛քն է՝ Հայաստա՛նը:

Մեր կազմակերպությունն ունի հետեւյալ երեք առաջարկությունները.

Ա) Ստեղծել հայոց պատմության համահայկական բուհական դասագիրք՝ անգլերեն, ռուսերեն, թուրքերեն լեզուներով եւ այն զետեղել Հայաստանի ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի անվճար կայքէջում:

Հայաստանում արդեն շրջանառության մեջ գտնվող հումանիտար բուհերի համար նախատեսված «Հայոց պատմության» դասագրքի անգլերեն թարգմանության ծախսերը մեր կազմակերպությունը վերցնում է իր վրա:

Բ) Հայաստանի դպրոցներում արդեն շրջանառության մեջ գտնվող հայոց պատմության դասագրքերը զետեղել Հայաստանի Հանրապետության կրթության եւ մշակույթի նախարարության կայքէջում, անվճար օգտվելու պայմանով:

Գ) Պատմական վեպերից («Տիգրան Մեծ», «Հայոց թագուհին», «Սամվել» եւ այլն) ստեղծել սեղմավեպեր եւ դրանց՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն, թուրքերեն թարգմանությունները անվճար օգտվելու պայմանով, զետեղել Ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի կայքէջում:

Մեծարգո նախագահ

Սփյուռքահայությանը ուծացումից փրկելու եւ ապագայում նրան որպես հայրենիքին սատարող ռազմավարական ուժ տեսնելու համար ամենակարեւոր եւ անհրաժեշտ գործը փոխարինող սերնդին հայադարձելու գործն է: Խնդրում ենք Ձեզ սատար լինել մեզ, խնդրում ենք Ձեզ վերոնշյալ մեր երեք առաջարկությունները համարել առաջնային կարեւորության հարցեր եւ կյանքի կոչել դրանք:

**«Սփյուռք-Diaspora» հասարակական-մշակութային կազմակերպության նախագահ՝**
**ԱՐԹՈՒՐ ԱՐՄԻՆ**
**Ամերիկայի Միացյալ Նահանգներ**

# Հոլոքոսթի հիշատակի օրվա առթիվ




**Անգլիայում հունվարի վերջերին նշվող արդեն ավանդական դարձած Հոլոքոսթի հիշատակի օրվա կապակցությամբ Լոնդոնի Կոմիտաս ինստիտուտը լույս է ընծայել Պոլ Լեւերկուենի «Գերմանացի սպան Հայոց ցեղասպանության ժամանակ: Մաքս Ֆոն Շուբներ-Ռիխտերի կենսագրությունը» գիրքը, որը գերմաներեն բնագրից անգլերեն է թարգմանել Ալեսդեր Լինը եւ որի առաջաբանը գրել է Խորխե Վարդպարոնյանը, իսկ պատմական ներածականը՝ Հիլմար Կայզերը:**

**Մաքս Ռիխտերը 1915-ին Էրզրումում եղել է Գերմանիայի հյուպատոսը, իսկ հետագայում Գերմանիա վերադառնալով՝ Ազգային սոցիալիստական (նացիստական) կուսակցության հիմնադիրներից: Գիրքը կարեւորվում է այն իմաստով, որ Ռիխտերը փաստորեն կապող օղակն է Հայոց ցեղասպանության եւ Հիտլերի միջեւ, հաստատելով վերջինիս իրազեկությունն այդ մասին եւ դրա ազդեցությունն իր հետագա ծրագրերի վրա: Ռիխտերը եղել է Հիտլերի ամենամոտիկ գործընկերը: Ֆյուրերը նրան շատ է հարգել եւ վստահել:**

**Գրքում Կայզերը քննարկել է Ռիխտերի «մասնակցությունը» 1915-ի իրադարձություններին, հիմնվելով բացառապես գերմանական փաստաթղթերի եւ վավերագրերի վրա: Նա Ռիխտերի կանխարգելիչ ջանքերը դրական է գնահատել, նշելով, որ Ռիխտերն անձնապես զրուցել է Թահսին Բեյի (նահանգային կառավարիչ) եւ Էրզրումի հոգեւոր հովիվ Սմբատ Սաադեթյանի հետ: Նա նաեւ իր մտահոգություններն է փոխանցել գերմանացի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմին:**

**Գրքում, ըստ ստացված մամլո հաղորդագրության, առկա են քարտեզներ եւ լուսանկարներ:**

**Գրքի ինդեքսն է ISBN 978-1-903656-81-5 եւ արժե 17 ֆունտ ստեռլինգ:** Հ. Ծ.

# Գլենդեյլում անարգ հարձակում ազատ եւ արդար խոսքի ու կարծիքի վրա...

***«Ազգը» հունվարի 27-ի համարում տեղ էր տվել Լոս Անջելեսից Գայանե Մանուկյանից ստացված մի հաղորդագրության, որտեղ պատմվում էր Գլենդեյլի «284 Ալիք» (AABC) հեռուստակայանի վրա Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակից AMGA հեռուստակայանի աշխատակիցների հարձակման մասին, որի պատճառով շուրջ 15 րոպե ընդհատվել է ուղիղ եթերով ընթացող հաղորդումը ճիշտ այն պահին, երբ ծանոթ լրագրող եւ մինչ այդ Լեւոն Տեր-Պետրոսյանի լոսանջելեսյան թիմի անդամ Համո Մոսկոֆյանը բացահայտում էր որոշ մանրամասներ նույն այդ թիմի մասին: Երեկ ստացանք մեկ այլ հաղորդագրություն, այս անգամ հենց Հ. Մոսկոֆյանից, որը որոշ մանրամասնություններ է ներկայացնում «284 Ալիքի» եթերով իր ունեցած եւ բռնի կերպով ընդհատված հեռախոսազրույցից: Հասկանալի է անշուշտ, որ վերստուգելու անհնարինության պատճառով չենք կարող երաշխավորել Հ. Մոսկոֆյանի մի շարք պնդումները:***

*ԽՄԲ.*

Անցյալ երկուշաբթի, երեկոյան ժամը 8.30-ին (Լոս Անջելեսի ժամանակով), երբ ուղիղ եթերով կապվել էինք Գլենդեյլի «284 Ալիք»-ով ելույթ ունեցող Սարգիս Գըլյանի հաղորդմանը, բացահայտելով, որպես մեզ ուղղված հարցի պատասխան, մի շարք «ընդդիմադիր» ղեկավարիկների դրամաշորթումները, դրամահավաքները, հայրենադավ գործունեությունը, որոնք Լոս Անջելեսի AMGA-ի հեռուստակայանը վերածել են մայր հայրենիքի ու պետության դեմ թունավոր քարոզչության, Հայաստանը Եվրոխորհրդում ձայնի իրավունքից զրկելու, ներքին աթոռակռվի, Լոս Անջելեսի հայկական համայնքում բախումներ հրահրելու որջի, հանկարծ ներս են խուժում մի խումբ «ընդդիմադիրներ»՝ գլխավորությամբ Լեւոն Տեր-Պետրոսյանին աջակցող (իմա՝ պառակտող ու վարկաբեկող) գրասենյակի, ակտիվիստներ Էդվարդ Կալայջյանի (AMGA-ի տնօրեն) եւ իր ընկերուհի Կարինե «Հարմոնի TV»-ի: Որովհետեւ իմ հեռախոսազրույցում իրենց անունն էր շոշափվել ճիշտ այն լեզվով, որոնց միջոցով ամիսներ շարունակ նրանք պահանջում էին մեզանից, հեռուստալրագրողներիցս՝ ինձ, Ռուդիկ Հովսեփյանին, Անահիտ Մարտիրոսյանին, Կարո Կարապետյանին, Արմեն Բարսեղյանին, սկանդալներ, անվերջ պարսավանք, հայհոյանքներ տեղացնել Հայաստանի իշխանությունների հասցեին, պատճառաբանելով մարտի 1-ի դեպքերը, ձերբակալությունները, քաղաքական հալածանքները եւ այլն: Իսկ այժմ, երբ բոլորիս աչքերը բացվել են եւ մերժել էինք ներքաշվել հայրենադավության եւ հայրենիքի վարկաբեկման պրոցեսում՝ բացահայտելով այս «փրկիչների» շարժման իսկական տերերին ու նպատակները, երկու ելույթներ էինք ունեցել Սարգիս Գըլյանի հայցումներով՝ որպես տարբեր քաղաքական հայացքների տեր անձինք՝ որոնց նպատակն է օգնել մայր հայրենիքին սփյուռքի եւ հայրենիքի ազնիվ մարդկանց օժանդակությամբ:

Հեռուստահաղորդումը այդ ընթացքում մի քանի րոպե կանգ առավ, երբ «284 Ալիք»-ի տնօրեն Վրեժ Աղաջանյանը դուրս հանեց ներխուժողներին, որոնց այնուամենայնիվ հաջողվեց էկրանով մի հայտարարություն անել սպառնալիքների տարափի տակ, թե իմ խոսքերը չեն համապատասխանում իրականությանը: Այս մարդիկ, որ արդեն ամիսներ շարունակ ամբաստանում էին Հայաստանի ղեկավարությանը այլախոհությունը չհանդուրժելու, ազատ կարծիքը խափանելու եւ ընդդիմադիրներին լռեցնելու մեջ, այժմ հեռավոր Գլենդեյլում, ամեն կարգի ստոր միջոցների են դիմում իրենց խայտառակ գործունեությունը բացահայտողների դեմ, վճարվելով զանազան մութ աղբյուրներից: Նպատակը՝ մի «գունավոր» հեղափոխություն էլ պատրաստել Հայաստանում, մեր զորքերը դուրս հանել Արցախի իրանամերձ սահմանային տարածքներից, իսկ ռուսական զորքերը՝ Հայաստանից:

Որպես ավելի քան 8 ամիս ԱՄՆ-ում Լեւոն Տեր-Պետրոսյանին աջակցման գրասենյակի անդամ, մի շարք ժողովրդային ցույցերի մասնակից ու ճառախոս, հեռուստամարաթոնների մասնակից ու կազմակերպիչ (Արման Բաբաջանյանի բանտից ուղարկած գրավոր խնդրանքով (...), որպես 450 հաղորդման հեղինակ, ես, որպես իրենց «պոտենցիալ մրցակից», «անհասկանալի» պատճառներով դուրս էի շպրտվել գրասենյակից, որովհետեւ երեւի շատ բան էի իմացել այդ հայրենադավ խմբակի գործունեության մասին:

Մինչ այդ, մեր սիրելի հեռուստադիտողներից ոմանք, շատ լուրջ մարդիկ, պետական եւ քաղաքական շատ ու շատ գործիչներ, ներկայացրել էին փաստաթղթեր, տեղեկություններ, անժխտելի փաստեր եւ իրականություններ՝ Էմիլյա եւ Արման Բաբաջանյանների, Արմեն Բարսեղյանի («Ախպարաշենում» ծնված «Կոնդի բոշա»), Սարգիս Թադեւոսյանի (Արաբոյի Սաքո), Արմեն Կակաչյանի («Կակաչ»), Դավիթ Շահնազարյանի ու իր «պաշտպանյալ» Ռուդիկ Հովսեփյանի, Էդվարդ Կալայջյանի ու Կարինե «Հարմոնի TV»-ի, Նաիրա-«սկանդալներ»-ի, Հովհաննես Բալայանի («Քաջ Նազար») եւ այլոց գործունեության մասին, որոնք վճարվել, ֆինանսավորվել, ֆինանսավորել են մութ եւ կասկածելի աղբյուրներից՝ իբր թե ստեղծելու «դեմոկրատիա» եւ «արդարություն» Հայաստանում: «Ձմեռ պապի» դիմակով հանդես եկող Հովհաննես Բալայան-«Քաջ Նազարը» իբր թե Խարբերդի մանկատանը օգնելու պատրվակով հանգանակել է ավելի քան 400.000 դոլարի գումար վերջին երկու տարում՝ հարուցելով նույնիսկ Լոս Անջելեսում ապրող Լեւոն Տեր-Պետրոսյանի մերձավորների կասկածները: Եվ արդեն, ըստ ձեռքի տակ գտնվող փաստերի եւ տեղեկությունների՝ 175 միլիոն դոլարի գումարներ են ուղարկվել ԱՄՆ-ի մի շարք կազմակերպություններից Հայաստանում իշխանափոխություն հաջողացնելու համար: Այս բոլորը պատճառ էին դարձել, որ ես «անցնեմ Ռուբիկոնը» եւ հայտարարեմ թե՝ այո՛, ես ընդդիմադիր եմ, բայց ո՛չ հայրենադավ:

Այժմ, արդարացնելու համար իրենց արարքները, ժողովրդի աչքին «մաքուր» երեւալու համար, այդ քաղաքական ստահակների խմբակը ամենօրյա «դեղին» քարոզչություն է ծավալում մոլորեցնելու համար բոլորին, լռեցնելու համար ինձ նման մարդկանց: Բայց արդեն ոչ ոք նրանց չի հավատում. կեղտը ջրի երեսն է ելել...

**ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ**
**Հանովեր, Գերմանիա**

AZG NEW 5.QXD 1/30/2009 9:24 PM Page 1



ՌՈՒՍԱՍՏԱՆ

# «Ձերդ Սրբազնությանը» փոխարինեց «Ձերդ Սրբությունը»



Մոտ երկու ամիս առաջ ես Հայ եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս սրբազանի միջնորդությամբ **«Ազգ»** թերթի համար ընդարձակ հարցազրույց ունեցա Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական կապերի նախագահ, Սմոլենսկի եւ Կալինինգրադի մետրոպոլիտ Կիրիլի հետ: Այն ժամանակ արդեն կարելի էր ենթադրել, որ ռուս ուղղափառ եկեղեցու նման աչքի ընկնող դեմքը կարող է դառնալ գերագույն հոգեւոր գահի հավակնորդներից մեկը (գաղտնիք չէր, որ Ալեքսի Երկրորդը ծանր հիվանդ է): Սակայն իրադարձությունները զարգացան շատ ավելի անսպասելիորեն ու արագ:

Նկատի ունենալով, որ մետրոպոլիտ Կիրիլը ռուս եկեղեցու ամենահրապարակային գործիչն է եւ իր բազմաթիվ ելույթներում հաճախ է դուրս գալիս հոգեւոր-կրոնական թեմատիկայի շրջանակներից, ես նախապատրաստել էի, այսպես ասած, քաղաքականությամբ համեմված համաքրիստոնեական բնույթի որոշ հարցեր եւ մտավախություն ունեի, որ կարող եմ «մեղադրվել» ուսերիս ծանր բեռ վերցնելու մեջ (ինչ էլ որ լինի, ես աշխարհիկ լրագրող եմ): Սակայն մետրոպոլիտը առինքնող հանգստությամբ հանգամանորեն պատասխանեց բոլոր հարցերին:

Ի՞նչն էր գրավում այդ հոգեւոր հայրի մեջ: Առաջին հերթին անհատականության մասշտաբայնությունը՝ խոր ինտելեկտը, բազմակողմանի բարձր կրթվածությունը, աստվածաբանի, փիլիսոփայի եւ առհասարակ լայնախոհ մարդու իմաստնությունը: Ցավով եմ նշում, որ քրիստոնեական աշխարհը ինչ-որ տեղ կուլ է գնում սեկուլյարիզմին՝ աշխարհականացմանը, որ դեմոկրատիան իր հետ բերում է նաեւ քրիստոնեական անանց արժեքներին խորթ բարոյական ու քաղաքական նորմեր, որ ընտանիքի ավանդական ինստիտուտը իսկական ճգնաժամ է ապրում, որ վերանում է մեղքի համապարփակ հասկացությունը եւ այլն:

Ինչքան էլ հռչակվի, որ եկեղեցին անջատ է պետությունից, ազգի հոգեւոր առաջնորդն անխուսափելիորեն դառնում է նաեւ պետական գործիչ, լավ թե վատ, դա ուրիշ հարց է: Կարելի է վստահորեն ասել, որ ընտրվելով Մոսկվայի եւ համայն Ռուսիո պատրիարք, Կիրիլը նոր լիցք կհաղորդի ռուս նորօրյա պատմության մեջ: Դրա համար նա ունի բոլոր նախադրյալները:

Նոր պատրիարքը (աշխարհական անունով՝ Վլադիմիր Միխայլովիչ Գունդյաեւ) ծնվել է 1946 թվականին Լենինգրադում: Սովորել է տեղի հոգեւոր ճեմարանում եւ հոգեւոր ակադեմիայում: Մետրոպոլիտ է ձեռնադրվել 1991 թվականին: Բարձր են գնահատվում նրա ծառայությունները ռուս ուղղափառ եկեղեցու միավորման, արտասահմանյան բազմաթիվ երկրներում (մասնավորապես Ասիայում) ռուսական նոր ծուխերի բացման, Վատիկանի հետ հարաբերությունների կարգավորման ասպարեզում: Արտահայտելով ռուս եկեղեցու շահերը, եղել է հողագնդի բոլոր մայր ցամաքներում: Հոյակապ հռետոր է, մեծ բարեգործ:

Տեղին կլինի նաեւ նշել, որ նոր պատրիարքն ամենայնս համապատասխանում է նորօրյա պահանջներին՝ ժամանակակից է, համարձակ, եռանդուն, զերծ անհարկի պայմանականություններից: Համենայն դեպս նա իր «նախընտրական» քարոզարշավն անցկացրեց նորագույն քաղաքական ընտրությունների տեխնոլոգիայով: Հրապարակային ելույթներով, բազում ուղեւորություններով ստեղծելով մեծ պաշար եւ ընտրվելով տեղապահ, նա դրանով իսկ շանս չթողեց ոչ մեկին: Իսկ վերջին փուլում հատկապես հմտորեն օգտագործելով ԶԼՄ-ները, փաստորեն միայնակ մնաց լրատվական տարածքում, ստվերի տակ թողնելով իր մրցակցին:

Լոյալ լինելով գործող աշխարհիկ իշխանությունների նկատմամբ, Կիրիլը միեւնույն ժամանակ կպահպանի որոշակի ինքնուրույնություն: Լայն երկխոսության մեջ կմտնի մյուս համաշխարհային կրոնների հետ: Կփորձի թափանցել երկրի կրթական համակարգ, ինչը չհաջողվեց նրա նախորդին:

Մեր վերոհիշյալ զրույցի ժամանակ մետրոպոլիտ Կիրիլը շատ ջերմ արտահայտվեց Հայ եկեղեցու, երկու քույր եկեղեցիների դարավոր համերաշխության ու փոխվստահելի բեղուն համագործակցության մասին: Լիիրավ կարելի է հուսալ, որ նոր պատրիարքի օրոք այդ հարաբերություններն ավելի սերտ կդառնան:

Որպես մետրոպոլիտ Կիրիլն, իրոք, այնքան ժողովրդական էր ու մատչելի, որ մոսկովյան թերթերից մեկը «ցավով» նշել էր, թե մարդիկ այնքան էին վարժվել «Ձերդ Սրբազնությանը», որ դժվարությամբ կհարմարվեն «Ձերդ Սրբությանը»:

Վաղը կկայանա Ռուս ուղղափառ եկեղեցու նոր գահակալի ձեռնադրությունը:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

ԱՄՆ

# Ամերիկահրեական կազմակերպությունների դիրքորոշումը խիստ կարեւոր է

***Թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացման, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկահրեական կազմակերպությունների դիրքորոշման փոփոխության մասին ԶԼՄ-ների հետաքրքրությունը չի նվազում: Խուսափելու համար կրկնողություններից, «Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանի հերթական հոդվածից ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք հետեւյալը:***

**«Էրդողանին «Հակավարկաբեկման լիգայի» բարձրագույն մրցանակը շնորհած Աբրահամ Ֆոքսմանը (ամերիկյան ADL կազմակերպության տնօրենը) պետք է ցնցված լինի Թուրքիայի վարչապետի քննադատություններից: Անցյալ շաբաթ «Միլիեթին» տված հարցազրույցում նա ասել է. «Թուրքիան մեր բարեկամն էր: Չեմ կարողանում հավատալ: Շփոթված եմ: Հրեաների կյանքը Թուրքիայում վտանգված է: Վարչապետը շատ խիստ բառեր օգտագործեց»: Դժգոհություն են արտահայտել նաեւ «Ամերիկահրեական կոմիտեի» պաշտոնական ներկայացուցիչների Ջեյկոբ Իսաակսոնը եւ բազմաթիվ ուրիշներ, որոնք շեշտել են, որ այլեւս չեն զբաղվելու Ամերիկայում Հայոց ցեղասպանության դեմ քարոզչությամբ:**

**Հետաքրքրականն այն է, որ 2005-ին Ֆոքսմանը անտեսել էր Էրդողանին մրցանակ շնորհելուց չորս օր առաջ բացահայտված այն լուրը («Մերձավորարեւելյան մամուլի հետազոտման ինստիտուտն» էր հայտնաբերել լուրը, վերցնելով «Հյուրիեթից»), թե Էրդողանը 1974 թվին «Մասկոմյա» պիեսում ոչ միայն դեր է ստանձնել, այլեւ պիեսի սցենարն է գրել եւ ռեժիսորական աշխատանքները կատարել: «Մասկոմյան» երեք չարագործ խմբավորումների՝ մասոններ, կոմունիստներ եւ յահուդիներ (հրեա) անուններից կազմված հապավում է:**

**Մյուս կողմից, պրոֆ. Բենջամին Յաֆեթը Սասունյանին վստահեցրել է, որ, ըստ իր ունեցած «հավաստի տեղեկությունների, ամերիկահրեական բոլոր գլխավոր կազմակերպություններն արդեն զզվել են Թուրքիայից եւ պատրաստ են պաշտպանել Հայոց ցեղասպանության բանաձեւի անցկացումը Կոնգրեսում»:**

**Այս ամենից եւ մանավանդ Օբամայի նախագահ ընտրվելուց եւ Դեմոկրատական կուսակցության մեծամասնություն կազմելուց (երկու պալատներում) հետո Թուրքիան հավանաբար մեծ դժվարություններ կունենա նոր քարոզարշավ ծավալելու Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունման դեմ», եզրակացնում է Սասունյանը:** Հ. Ծ.

# Վիճարկվում է Հիլարի Քլինթոնի նշանակման օրինականությունը

**Պետդեպարտամենտի աշխատակիցներից մեկը Վաշինգտոնի դատարանին ներկայացրել է հայց, որտեղ պնդում է, թե պետքարտուղարի պաշտոնում Հիլարի Քլինթոնի նշանակումը հակասում է երկրի սահմանադրությանը:**

**Հայցվոր Դեւիդ Ռոդեարմելը պնդում է, որ սահմանադրության 6-րդ գլխի 1-ին հոդվածի համաձայն, Սենատի կամ Ներկայացուցիչների պալատի անդամը չի կարող աշխատանքի անցնել պետվարչակազմում, եթե Կոնգրեսում նրա աշխատանքի ժամանակ այդ պաշտոնն ստեղծվել է կամ դրա համար սահմանվել է ավելի բարձր աշխատավարձ:**

**Սենատում Հ. Քլինթոնի երկրորդ ժամկետը սկսվեց 2007-ի հունվարին, եւ այդ ժամանակ էլ պետքարտուղարի աշխատավարձը 186 600 դոլարից բարձրացվեց 191 300-ի: Իրավական բախումից խուսափելու նպատակով Կոնգրեսը պետքարտուղարի աշխատավարձը 2006-ի մակարդակին իջեցրեց, երբ Կոնդոլիզա Ռայսը թողեց այդ պաշտոնը:**

**Ֆրանսպրես գործակալությունը մեջբերում է Ռոդեարմելի այն խոսքերը, թե «մեկ դարից ավելի երկու կուսակցությունների ներկայացուցիչները տարբեր եղանակներով փորձել են չնկատել այսպես կոչված «ռոճիկների հոդվածի դրույթները»: Հայցվորը պնդում է, թե ինքն իր քայլով փորձում է «ի վերջո լուծել այդ հարցը եւ վերականգնել սահմանադրության ոգին»:**

**Հայցվոր դիվանագետի խոսքերով, ինքը չի հետապնդում «կուսակցական, քաղաքական կամ անձնական նպատակներ» եւ ձգտում է լոկ օրենքի գերակայության վերահաստատմանը:**

**Judicial Watch պահպանողական իրավապաշտպանական կազմակերպությունում Ասոշիեյթեդ պրեսի թղթակցին պարզաբանել են, որ, սահմանադրության համաձայն, Քլինթոնը կարող է պետական պաշտոն զբաղեցնել 2013-ից ոչ շուտ, երբ Սենատում կավարտվի նրա երկրորդ ժամկետը: Մինչդեռ պետդեպարտամենտում հրաժարվում են որեւէ ձեւով մեկնաբանել տվյալ պարագան:**

# Կաստրոն պահանջում է վերադարձնել Գուանտանամոն

**Կուբայի կառավարության կայքէջում հրապարակած «Խոհեր Միացյալ Նահանգների նոր նախագահի քաղաքականության մասին» հոդվածում երկրի նախկին ղեկավար Ֆիդել Կաստրոն հայտարարել է, որ «Կուբայի ժողովրդի կամքին հակառակ երկրում ռազմակայանի գոյությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների խախտում է»: Կաստրոն ԱՄՆ նոր նախագահ Օբամային կոչ է արել անվերապահորեն հարգել այդ սկզբունքները, Կաստրոն ավելացրել է, որ խոսելով Գուանտանամոն Կուբային վերադարձնելու մտադրության մասին, Օբաման ակնարկել է, որ դա տեղի չի ունենա, քանի որ կղզին ռազմավարական նշանակություն ունի ամերիկացիների համար եւ որ կուբացիները պետք է փոխարենը ինչ-ինչ զիջումներ անեն: Նման մոտեցումը Կաստրոն համարում է անընդունելի:**

**Բացի դրանից, Կուբայի նախկին նախագահն Օբամային մեղադրել է Իսրայելի իրականացրած պաղեստինցիների ցեղասպանությունը պաշտպանելու եւ դրան անուղղակիորեն մասնակցելու մեջ: Կաստրոյի խոսքերով, Իսրայելն ԱՄՆ-ի ձեռքին լծակ է Մերձավոր Արեւելքի բոլոր մահմեդական երկրների վրա ճնշում գործադրելու համար:**

**Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Գուանտանամոն Կուբային վերադարձնելու կոչով ավելի վաղ Օբամային դիմել էր Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը, ողջունելով կղզու ռազմակայանի բանտը փակելու Օբամայի մտադրությունը:**

**1903-ին Կուբան Գուանտանամոյի ռազմակայանն անժամկետ վարձակալության է տվել ԱՄՆ-ին: Պայմանագիրը կարող է լուծարվել, եթե խախտվեն դրա պայմանները կամ ԱՄՆ-ը կամովին հեռանա ռազմակայանից:**

# Իլինոյսի նահանգապետը պաշտոնանկ արվեց

**Իլինոյսի նահանգապետ Ռոդ Բլագոեւիչին Սենատը երեկ քվեարկությամբ պաշտոնանկ է արել: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ բոլոր 59 սենատորները քվեարկել են Բլագոեւիչին սեփական լիազորությունների չարաշահման մեջ մեղադրող որոշման օգտին:**

**Սենատորները նաեւ որոշել են Բլագոեւիչին անժամկետ կերպով արգելել պետական պաշտոններ զբաղեցնել Իլինոյսում:**

**Ավելի վաղ նահանգապետի պաշտոնանկության օգտին քվեարկել էր նահանգի ընդհանուր ժողովի ստորին պալատը: Այսուհետեւ նահանգապետի պաշտոնը կզբաղեցնի Իլինոյսի փոխնահանգապետ Փեթ Քվինը:**

**2008-ի դեկտեմբերի 9-ին Բլագոեւիչը ձերբակալվել էր ՀԴԲ-ի նյութերի հրապարակումից հետո, որտեղ կան նրա կաշառակերության բազմաթիվ վկայություններ: Դատարանին ներկայացվեցին նաեւ հեռախոսազրույցների ձայնագրություններ, որոնցում Բլագոեւիչը քննարկում է նախկին սենատոր Բարաք Օբամայի թափուր պաշտոնը վաճառելու հարցը:**

**Նախկին նահանգապետը սենատորի թափուր պաշտոնի հավակնորդներից պահանջում էր զանազան նյութական եւ քաղաքական օգուտներ: Բացի դրանից, նա ճնշում էր գործադրում «Չիկագո թրիբյուն» հրատարակության վրա, շորթումներ անում նվիրատվություններից:**

**Շարունակվում է քրեական հետաքննությունը Բլագոեւիչի նկատմամբ, որին կասկածում են խարդախության եւ դրամաշորթության մեջ: Այս կապակցությամբ նրան մեղադրանքներ դեռ չեն ներկայացված:**

# ԿԺԴՀ-ն չեղյալ կհայտարարի Հարավային Կորեայի հետ կնքած համաձայնագրերը

ԿԺԴՀ-ն մտադիր է չեղյալ հայտարարել Հարավային Կորեայի հետ կնքած բոլոր ռազմական ու քաղաքական համաձայնագրերը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով Կորեայի խաղաղ միավորման կոմիտեի հայտարարությունը:

Վերջինիս համաձայն, չեղյալ կհայտարարվեն մասնավորապես ռազմական ու քաղաքական դիմակայությանը վերաբերող բոլոր համաձայնագրերը: Բացի դրանից, Հյուսիսային Կորեան այլեւս մտադիր չէ ճանաչել 1953-ին Դեղին ծովում միակողմանիորեն հաստատված ծովային սահմանը: ԿԺԴՀ-ն քանիցս պահանջել է փոփոխել այն, բայց առայժմ հաջողության չի հասել տվյալ հարցում:

Հայտարարության մեջ նաեւ մեղադրվում է Հվ. Կորեայի նախագահ Լի Մեն Բակը, որի կառավարությունը չի կատարել 2000-ի եւ 2007-ի դիվանագիտական հանդիպումների ընթացքում ձեռք բերված համաձայնությունները: «Նման պայմաններում ինքնին հասկանալի է, որ ԿԺԴՀ-ն պարտավոր չէ կատարել երկկողմ համաձայնագրերը», ընդգծվում է հայտարարությունում: Նաեւ ամբաստանվում է Լի Մեն Բակը, որ «երկու երկրները կանգնեցրել է պատերազմի եզրին»: Նա Հարավային Կորեայի նախագահն է 2008-ի փետրվարից: ԿԺԴՀ-ում նրան անվանում են «դավաճան»:

Երկու Կորեաներն առճակատման վիճակում են 1950-ից: 2008-ի դեկտեմբերին երկկողմ հարաբերությունները կտրուկ սրվեցին, երբ ԿԺԴՀ-ն խստացրեց սահմանային հսկողությունը եւ երկրից արտաքսեց համատեղ ձեռնարկության հարյուրավոր հարավկորեացի աշխատողների:

AZG NEW 6.QXD 1/30/2009 9:23 PM Page 1





# Գոնսալո Գուարչի նոր վեպը՝ «Հայկական կտակը» իսպաներեն

***Իսպանացի հայտնի մտավորական Գոնսալո Գուարչին, ով քաջածանոթ էր իր «Հայկական տոհմածառը» վեպով, վերջերս լույս ընծայեց «Հայկական կտակը» նոր վեպը։ Բայց մինչ այդ վեպին անցնելը նշենք, որ օրերս Մոսկվայում լույս է տեսել «Հայկական տոհմածառի» ռուսերեն թարգմանությունը եւ արդեն վաճառքի է հանվել մոսկովյան գրախանութներում։ Ապրիլի 15-18-ը Ռուսաստանի մայրաքաղաքում տեղի կունենա այդ գրքի պաշտոնական շնորհանդեսը, որին հրավիրվել են հեղինակը՝ Գոնսալո Գուարչին եւ իսպանահայ լրագրող ու թարգմանիչ Արթուր Ղուկասյանը։ Վերջինիս էլ խնդրեցինք ներկայացնել գրքի հեղինակին եւ նրա վերջին վեպը՝ «Հայկական կտակը»։***

Արթուր Ղուկասյան-Գոնսալո Գուարչին թեեւ մասնագիտությամբ ճարտարապետ է, այդուհանդերձ լայն ճանաչողություն ու համբավ է ձեռք բերել ինչպես Իսպանիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ շնորհիվ գրական գործունեության։ Համագործակցել է մի շարք իսպանական թերթերի ու ամսագրերի հետ։ 1997թ. «Դրախտի դռները» գրքի համար ստացել է Վիսենտե Բլասկո Իբանյեսի մրցանակը։ Այնուհետեւ լույս են տեսել մի քանի այլ հատորներ, այդ թվում՝ 2002-ին «Հայկական տոհմածառ»ը, որի համար հեղինակը ստացել է ՀԲԸՄ «Կարպիս Փափազյան մրցանակը», ինչպես նաեւ պարգեւատրվել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով, ստացել Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում։ Իր ստեղծագործություններում անդրադարձել է տարբեր ազգերի խնդիրներին՝ հայերի, քրդերի, հրեաների։ «Հայկական տոհմածառը» մասամբ թարգմանված է հայերեն։




«Հայկական կտակ»ը կարդալով, պարբերաբար Ֆրանց Վերֆելին էի մտաբերում ու հավակնում կարծել, որ իսպանալեզու եւ ոչ մի գրող չի թափանցել մեր ազգի ինքնության եւ պատմության մեջ այն աստիճան, որքան հաջողվել է Գուարչին։

Այդ գիրքը լուրջ աշխատություն է, որի էջերում նկարագրված դժոխքը նույնիսկ Դանթեն էլ չէր կարող պատկերացնել։ Որպես հեղինակ նա քաջատեղյակ է հայկական հարցին եւ հայ ժողովրդի պատմությանը։

**- Ի՞նչ է վեպի բովանդակությունը:**

- Նկարագրվող դեպքերի հիմքը՝ ցեղասպանության վավերագրական փաստերն են, որոնք ընդգրկում են 1885-1924-ի հայության գոյապայքարը։ Այսինքն. Աբդուլ Համիդից մինչ Աթաթուրք։ Գիրքն իր ամբողջության մեջ կարելի է անվանել գեղարվեստավավերագրական հիանալի մի հատոր, որտեղ նկարագրված է գրեթե այն ամենը, ինչ որ այդ ժամանակաշրջանում պատահել է Թուրքիայում։

Վեպում նկարագրվող ողբերգական իրադարձությունների գլխավոր հերոսն Անրի դե Լասուրն է, հանգամանքների բերումով Կ.Պոլսում հայտնված ֆրանսիացի լրագրողը, ով հետագայում աշխատում է իբրեւ ֆրանսիական դեսպանատան ներկայացուցիչ։ Մարիան, որի հետ ամուսնացավ վեպի հերոսը՝ Անրի դե Լասուրը, վերջինիս կողմից փրկվածներից մեկն է։ Վեպում ի թիվս այլոց, հանդիպում ենք նաեւ դեսպան Մորգենթաուին։

**- Ե՞րբ լույս կտեսնի գրքի հայերեն թարգմանությունը:**

-Առայժմ աշխատանքներ են տարվում անգլերեն թարգմանության ուղղությամբ։ Այդ գործով զբաղվում է Հ1-ի Վաշինգտոնի թղթակից Հայկարամ Նահապետյանը։ Հայերենի շուրջ դեռեւս խոսակցություններ չկան։ Իսկ ավելի զգայական նորությունն այն է, որ իսպանացի լրագրող Անտոնիո Գարսիա Կաստիլեխոն (Antonio Garcia Castillejo) պատահաբար ծանոթանում է այս գրքին եւ ընթերցումից խորապես ազդված ու ցնցված, որոշում մեկնել Հայաստան։ Այնտեղ պարզապես սիրահարվում է մեր երկրի վրա ու վերադառնալով, փնտրում Գուարչին, խնդրելով մեկ հարցազրույց մադրիդյան ռադիոյի համար՝ ինձ նույնպես հրավիրելով այդ զրույցին։

Հարցազրույցի ընթացքում իսպանացի գրող Գուարչն առաջին անգամ հայտնեց նաեւ, որ պատրաստվում է հայկական թեմայով երրորդ գիրքը գրել եւ այսպիսով ամբողջացնել հայկական եռագրությունը։ Ես իմ հերթին շնորհակալություն հայտնելով նման աշխատանքի համար, նշեցի, որ ցեղասպանությունը 1915 թվականին կանգ չի առել եւ հասել է մինչեւ մեր օրերը՝ իբրեւ վկայություն բերելով Սումգայիթյան ջարդերն ու Նախիջեւանի հայկական հուշարձանների ոչնչացումը։

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Պրահա

ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ

# Իրանական ժամանակակից գեղանկարչությունը կանանց ստեղծագործություններում

Իրանի ժամանակակից գեղանկարչությամբ հետաքրքրվողները եւ ընդհանրապես մեր դրկիցին ճանաչելու ցանկություն ունեցողները երեկվանից եւ առաջիկա օրերին Հայաստանի նկարիչների միությունում կկարողանան դիտել հետաքրքրական գործեր։ Ցուցահանդեսը, որ երեկ բացվեց, ներառում է իրանցի երեք գեղանկարչուհիների՝ **Շադի Ղոմչեի, Արեզու Աքբարի, Այլար Շահբազի** գործերը, ինչպես նաեւ «Սաբա» պատկերասրահի 35 ցուցանմուշ։

Ամբողջը միասին փաստում են, որ Իրանի գոնե ներկայացված ժամանակակից գեղանկարիչները ստեղծագործում են մտքի ու առաջավորի համար բաց, միեւնույն ժամանակ ավանդականի, իրենց մշակույթի առանձնահատկությունների պահպանման սկզբունքով։ Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ Իրանի ժամանակակից գեղանկարչությունն էթնիկ հիմքից կտրված չէ, բայց եւ կրողն է համամարդկայինի։ Իրենք՝ նկարչուհիները գոհ էին Հայաստանում ցուցահանդեսի լինելիությունից ու ակնկալում էին պատշաճ հետաքրքրություն հայաստանյան գործընկերներից ու հասարակությունից։




Ցուցահանդեսը, որ կազմակերպվել է իսլամական հեղափոխության 30-ամյակի կապակցությամբ Հայաստանում անցնող «Այգաբացի տասնօրյակի» շրջանակներում, ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** կարեւորեց. «Բազմադարյան բարեկամություն կա մեր երկրների միջեւ եւ նույնքան էլ դրկիցություն։ Հպարտ պիտի լինենք նման հարուստ մշակույթ ունեցող հարեւան ունենալու համար, որը նաեւ խիստ պատկառանքով է վերաբերում օտարների մշակույթին նույնպես՝ Իրանում մեծ հոգածությամբ են պահպանվում հայկական պատմաճարտարապետական արժեքները, ինչի համար երախտապարտ ենք»։

Հայաստանում Իրանի դեսպան **Սեյեդ Ալի Սաղայանին** ցուցահանդեսի բացման իր խոսքում ընդգծեց. «Տոնում ենք մեր երկրի զարգացումը ապահոված հեղափոխության 30-ամյակը եւ կարեւոր ենք համարում, որ մեր դարավոր բարեկամությունը Հայաստանի հետ այսօր էլ փաստ է։ Մենք կարեւորում ենք բարիդրացիական հարաբերությունները մեր բոլոր մոտ հարեւանների ու նաեւ մյուս բոլոր երկրների հետ։ Իսկ մշակութային կապերի ամրապնդումը ուղղակիորեն նպաստում է դրան»։

Համանման խոսք ասաց նաեւ Իրանի դեսպանության մշակույթի կցորդ **Մուհամադ Շաքիբան**՝ ներկաներին հրավիրելով մասնակցելու «Այգաբացի տասնօրյակի» միջոցառումներին եւ հատկապես փետրվարի 6-ին ֆիլհարմոնիկ մեծ համերգասրահում կայանալիք իրանական ժողովրդական համերգին, որի ընթացքում հանդես կգա կանանց երգչախումբը։ Ի դեպ, մուտքն ազատ է։

Միջոցառումների ամբողջական ցանկը **«Ազգ»-ը** հրապարակել է հունվարի 30-ի համարում։

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# «Աղբյուր» մանկապատանեկան հանդեսի 85-ամյակը

Հայաստանյան ներկա մանկապատանեկան մամուլը հիմնականում ներկայացնում են «Կանչ», «Ծիծեռնակ» եւ «Աղբյուր» պարբերականները։ Երեկ ՀԳ միության կլոր սրահում նշվեց «Աղբյուր» ամսագրի 85-ամյակը։ Հիմնադրման սկզբից, 1923-ին այն կոչվել է «Պատկոմ», ապա վերանվանվել «Հոկտեմբեր», հետագայում՝ «Պիոներ», 1991-ից՝ «Աղբյուր»։ Առաջին խմբագրական կոլեգիայի կազմում եղել են Եղիշե Չարենցը, Ստեփան Զորյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը։ Տարբեր շրջաններում հանդեսի գլխավոր խմբագիրներն են եղել Գարեգին Սեւունցը, Սաղաթել Հարությունյանը, Անահիտ Սահինյանը, Պերճ Զեյթունցյանը, ներկայում՝ Թադեւոս Տոնոյանն է։ Ժամանակին մշակույթի ու գրականության ծաղկման խորհրդային շրջանում ամսագիրն իր շուրջն է հավաքել նշանավոր մտավորականների, գրողների, ստեղծել ուշագրավ մթնոլորտ, կարեւոր ներդրում ունեցել ինչպես գրական կյանքում, նաեւ կրթական-դաստիարակչական ոլորտում։ Այս հանդեսի էջերում սկզբնական ստեղծագործությունները տպագրած գրեթե բոլոր հեղինակները մշտապես մնացել են գրական միջավայրում, իսկ շատերը հետագայում մեր երեւելիներից են դարձել։ Այսինքն՝ յուրաքանչյուր պարբերականի հաջողության ամենակարեւոր գրավականը՝ հեղինակային ընտրությունը կատարվել է գեղարվեստական չափանիշներից ելնելով։

Հետաքրքրական է, որ Լեւոն Հախվերդյանի, Ռաֆայել Իշխանյանի, Հրանտ Մաթեւոսյանի, Լեւոն Հարությունյանի, Հայկ Խաչատրյանի, Վախթանգ Անանյանի պատմվածքների ու հոդվածների անդրանիկ հրապարակումների շարքերն ավելի ուշ ամբողջացել են առանձին գրքերով («Զրույցներ լեզվի մասին», «Պատկերազարդ պատմություն հայոց», «Մեր վագրը», «Մեր շրջապատի ծաղիկները»)։ Նկարիչների մի պատկառելի խումբ տարբեր տարիների հանդեսի էջերին ավելի շուք է տվել՝ Մարտիրոս Սարյան, Հակոբ Կոջոյան, Փանոս Թերլեմեզյան, Գրիգոր Խանջյան։

«Աղբյուր» ամսագիրը գրական եւ, առհասարակ, մամուլի համար այս դժվարին ժամանակներում շարունակում է պահպանել նախկին ավանդույթները, իհարկե, անհամեմատ նվազ տպաքանակով (2000 օրինակ), բարեբախտորեն, պետության, կրթության եւ գիտության նախարարության հովանավորությունը վայելելով։ 85-ամյակի առիթով ամսագիրն արժանացավ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալին», աշխատակազմից Հովնան Կարապետյանին, Կիմա Խաչատրյանին եւ Էդվարդ Հախվերդյանին տրվեցին պատվոգրեր. մրցանակները հանձնեց գրահրատարակչության վարչության պետ Էդվարդ Միլիտոնյանը։ Նա իր՝ նախկին աշխատակցի հուշերից պատմեց, ասաց նաեւ, որ շատ դժվար է մանկապատանեկան ամսագիր ստեղծել, իսկ միջին տարիքի դպրոցականների համար հատկապես քիչ է գրվում։ Դժվար է, որովհետեւ երեխայի, պատանու հոգեբանության նրբերանգները, նրանց հասուն հետաքրքրությունները հասկանալը զգայուն մոտեցում ու ճաշակ է պահանջում։ Մանկական ամսագրի համար շատ էական է նաեւ նկարազարդումը. Մարտին Պետրոսյանը, Հենրիկ Սիրավյանը, Խորեն Հակոբյանը, վերջերս կյանքից, ավա՜ղ, հեռացած Կարեն Սմբատյանը ստեղծում են անհրաժեշտ գունապատկերային մթնոլորտը։

«Աղբյուրին» բարեմաղթանք-հաջողություններ մաղթեցին Լեւոն Անանյանը, Հովհաննես Գրիգորյանը, Մարգո Ղուկասյանը, Լիպարիտ Սարգսյանը, Հարություն Հովնաթանը, Գրիգոր Սաֆարյանը, Յուրի Սահակյանը, Երվանդ Պետրոսյանը։

«Ծիծեռնակ» ամսագրի խմբագիր Անուշ Վարդանյանը բարեմաղթանքից զատ անդրադարձավ վերջին շրջանում ՀԳՄ-ի շուրջ հեռուստատեսային վարկաբեկումներից ձեւավորված հասարակական վերաբերմունքներին եւ առաջարկեց գրողների միության եւ մշակույթի նախարարության համատեղ հակազդեցություն՝ այդ երեւույթին։ Ըստ նրա, հատկապես հեռուստաընկերությունները ակնհայտորեն դրական որեւէ ձեռքբերման, լուրջ միջոցառումների ուշադրություն չեն դարձնում, մինչդեռ հակառակը (սկանդալ-սենսացիա)՝ որքան ուզես։

Իսկ «Աղբյուր» հանդեսի անցած տարվա ձեռքբերումներից մեկը մշակույթի նախարարության հետ համատեղ տարվա 300 լավագույն ստեղծագործություններից կազմված տարեգրքի լույսընծայումն է։

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Քննարկվեցին Հայաստան-սփյուռք համագործակցության ծրագրեր

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց ԱՄՆ եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության եւ կենտրոնական վարչության փոխատենապետ, ՌԱԿ-ի նույն շրջանի համաատենապետ, գրականագետ, ակադեմիկոս Երվանդ Ազատյանին։ Հանդիպման ընթացքում քննարկվեցին 2009-ին կայանալիք մի շարք ծրագրեր, որոնց թվում էին ապրիլին կայանալիք «Հայկական ճարտարապետության 21-րդ դարը» միջազգային գիտաժողովի, «Օտարագիր հայ գրողների համաժողովի» ու նաեւ Թեքեյան մշակութային միության գործունեությանը նվիրված մի շարք հարցեր։ Քննարկման ընթացքում մեծ ուշադրություն ու նշանակություն տրվեց երկուստեք Հայաստան-սփյուռք կապերի սերտացմանն ու համատեղ ծրագրերի իրականացմանը, որով էլ կամրապնդվի սփյուռքում հայապահպանման ու լեզվի հետ կապված մի շարք խնդիրները։



ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# 200-ամյակի շեմին ցույց կտան 22-ամյա Դարվինի անմորուք դեմքը

Չարլզ Դարվինին երիտասարդ պատկերացնելու հնարավորությունը չուներ մարդկությունը, քանի որ գիտնականին մշտապես պատկերել են որպես տարեց ու երկար մորուքով մեկը։ Բայց Քեմբրիջի Հիսուսի քոլեջի այգում փետրվարի 12-ին տեղադրվելիք քանդակում գիտնականը ոչ միայն անմորուք է, այլեւ երիտասարդ՝ 22 տարեկան։ Քանդակի հեղինակը՝ Էնտոնի Սմիթը մեկ տարի ուսումնասիրել է Դարվինի լուսանկարները ու պարզել, թե նա ինչպիսին էր 1831-ին։ Նույն նպատակով նաեւ այցելել է գիտնականի տոհմակիցներին, ժառանգներին, որոնք արտաքին նմանություններ ունեն իրենց հանրահայտ նախնու հետ։

Բրոնզե քանդակը կտեղադրվի Չարլզ Դարվինի ծննդյան 200-ամյակի կապակցությամբ։

Ն. Պ.

